



ՀԱՍՄԻԿ ՀԱՄԱՐՁՈՒՄՅԱՆ
ՀՊՏՀ հակաճգնաժամային և զբոսաշրջության
կառավարման ամբիոնի ասիստենտ


ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՀՀ-ՈՒՄ

Հոդվածում քննարկվել են ՀՀ-ում հասարակական հարաբերությունների կառավարման համակարգի առանձին բաղադրիչները և դրանց փոխհարաբերությունները: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հասարակական հարաբերությունները կառավարող սուբյեկտը կառավարման օբյեկտի մաս է, կառավարման համակարգի բաղադրիչների վերլուծությունն իրականացվել է բնակչության քաղաքական-հասարակական գործընթացներին մասնակցության տեսանկյունից՝ լիազորությունների և պատասխանատվության բաշխման համատեքստում: Ժողովրդավարության կայացման հիմքում դիտարկվել է ինչպես իշխանական լիազորությունների բաշխումը, այնպես էլ ակտիվ քաղաքացիական հասարակության առկայությունը:

Հիմնաբառեր. *հասարակական հարաբերությունների կառավարման համակարգ, բնակչության մասնակցությունը քաղաքական-հասարակական գործընթացներին, լիազորություններ և պատասխանատվություն, քաղաքացիական հասարակություն, քաղաքացիական ակտիվություն*

Հասարակական հարաբերությունների ժողովրդավարացման և սոցիալ-տնտեսական բնութագրիչների խնդիրները ամբողջականացնելու, ինչպես նաև դրանց զարգացման հիմքերը բացահայտելու տեսանկյունից կարևորվում է հասարակական հարաբերությունների կառավարման համակարգի, դրա բաղադրիչների և փոխհարաբերությունների վերլուծությունը: Մենք կողմնակից ենք այն տեսակետին, որ հասարակական հարաբերությունների ճգնաժամը պայմանավորող առավել էական գործոնը անարդյունավետ կառավարման համակարգն է: Եթե ժողովրդավարացման գործընթացում կարևոր նշանակություն կարող են ունենալ կառավարման ոճերը և դրանց գործարկման մեխանիզմները, իսկ սոցիալ-տնտեսական բնութագրիչների լավարկման գործընթացում՝ կառավարման արդյունավետությունը, ապա այս ամենի հիմքում կառավարման համակարգն ու դրա կառուցվածքն են:

Առավել հստակեցնելու նպատակով առանձնացվում է հանրային կառավարման համակարգը, որը լավագույնս ներկայացված է Յու. Սուվարյանի «Հանրային կառավարման տեսության և պատմության ուրվագծեր» աշխատության մեջ:



Գծանկար 1. Հանրային կառավարման համակարգը և դրա կազմավորման մեխանիզմը¹

Հարկ է նշել, որ ներկայացված գծապատկերում հաշվի են առնվել թե՛ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, թե՛ քաղաքացիական հասարակության և ՋԼՄ-ների փոխկապակցվածությունն ու փոխկախվածությունը: Այստեղ կարելի է առանձնացնել յուրաքանչյուր օղակի դերակատարումը հասարակական հարաբերությունների կառավարման համակարգում: Սակայն նախքան դրանցից յուրաքանչյուրի՝ հասարակական հարաբերությունների վրա ազդեցության որոշումը, ներկայացնենք իրականացվող վերլուծության հաջորդականությունը:

Այսպես՝ նախ անհրաժեշտ է դիտարկել կառավարման յուրաքանչյուր օղակի դերակատարումը հասարակական հարաբերությունների կառավարման համակարգում, գնահատել ՀՀ-ում դրանց գործունեության և փոխազդեցության արդյունավետությունը, գնահատման արդյունքների հիման վրա բնութագրել հասարակական հարաբերությունների կառավարման ճգնաժամային կամ ոչ ճգնաժամային բնույթը:

Գծանկար 1-ում հասարակական հարաբերությունների կառավարման համակարգում առանձնակի դեր է տրվում Սահմանադրությանը, ինչը ժամանակակից ժողովրդավարական պետության ելակետային հիմքերից է: ՀՀ սահմանադրության առաջին հոդվածով ամրագրված է Հայաստանի Հանրապետության ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն լինելը, իսկ երկրորդ հոդվածում նշվում է, որ Հայաստանի Հանրապետությունում իշխանությունը պատկանում է ժողովրդին:

¹ Յու. Սուվարյան, Հանրային կառավարման տեսության և պատմության ուրվագծեր, Եր., ԱՌՏ, 2004, էջ 7:

Հանրապետության բնակչության մասնակցությունը հասարակական հարաբերությունների կառավարմանը հիմնականում իրականացվում է ընտրությունների և քաղաքացիական հասարակության ինստիտուտների միջոցով: Ընտրությունների միջոցով հասարակության կառավարման իրավունքն ամրագրված է նաև ՀՀ սահմանադրության երկրորդ հոդվածով՝ «Ժողովուրդն իր իշխանությունն իրականացնում է ազատ ընտրությունների, հանրաքվեների, ինչպես նաև Սահմանադրությամբ նախատեսված պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց միջոցով»²:

Ընտրություններին մասնակցությունը կարող ենք ներկայացնել հասարակական համախմբման տեսանկյունից, երբ մասնակցության բարձր տոկոսը ենթադրում է հասարակական իրավիճակի վրա ազդեցություն ունենալու հնարավորությունների օգտագործում, իսկ փոքր տոկոսը՝ ազդեցության հնարավորությունների սահմանափակություն:

Աղյուսակ 1

ՀՀ-ում անցկացված ընտրություններին և հանրաքվեներին բնակչության մասնակցության աստիճանը³

Նախագահական ընտրություններ			Խորհրդարանական ընտրություններ		Հանրաքվե		ՏԻՄ ընտրություններ	
Տարեթիվ	Մասնակցություն, տոկոս		Տարեթիվ	Մասնակցություն, %	Տարեթիվ	Մասնակցություն, %	Տարեթիվ	Մասնակցություն, %
	Առաջին փուլ	Երկրորդ փուլ						
1991	70	-	1990	60.2	1991	95.05	1996	-
1996	60.3	-	1995	54.3	1995	55.6	1999	-
1998	63.5	68.1	1999	51.7	2003	52.1	2002	-
2003	63.21	67.04	2003	51	2005	65.33	2005	-
2008	72.14	-	2007	59.35	-	-	2008	56.4
2013	60.09	-	2012	62.35	-	-	2012	46.3
Միջինը	65.55		Միջինը	56.48	Միջինը	67.02	Միջինը	51.35

Ինչպես երևում է աղյուսակի տվյալներից, առավել բարձր ակտիվություն արձանագրվել է հանրաքվեների ժամանակ, սակայն այս ցուցանիշի բարձր արժեքը պայմանավորված է հիմնականում 1991 թ. անկախության հանրաքվեին 95% մասնակցությամբ: Առանց այդ արդյունքների, հանրաքվեներին մասնակցության միջին ցուցանիշը 57,68% է: Բացի 1991 թ., հանրաքվեի են դրվել ՀՀ սահմանադրությունը և դրա փոփոխությունները: ՀՀ սահմանադրությունը հնարավորություն է տալիս հանրաքվեի դնելու նաև որոշ օրենքներ (Ազգային ժողովի կամ Կառավարության առաջարկով)⁴: Նշենք, որ հանրաքվեի դրված նախագիծը համարվում է ընդունված, եթե կողմ է քվեարկել մասնակիցների կեսից ավելին, բայց ոչ պակաս, քան ընտրական ցուցակնե-


² ՀՀ սահմանադրություն, հոդված 2:

³ Տվյալներն ըստ՝ ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի (<http://www.elections.am/>), Nohlen D., Grotz F. & Hartmann C., Elections in Asia: A data handbook, Volume I, 2001, էջ 336, The International Foundation for Electoral Systems (IFES - <http://www.ifes.org/>), <http://res.elections.am/images/doc/ampop1.pdf> տեղեկատվական աղբյուրների:

⁴ Տես ՀՀ սահմանադրություն, հոդված 112:

րում ընդգրկված քաղաքացիների մեկ քառորդը⁵: Ընդ որում, 1995 թ. ընդունված Սահմանադրությամբ որպես սահմանաչափ էր հաստատված մեկ երրորդը: Այս դրույթի կիրարկումը հնարավորություն է տվել չընդունելու 2003 թ. սահմանադրական փոփոխությունները, երբ կողմ են քվեարկել հանրաքվեի մասնակիցների 42,6%-ը, սակայն ընտրական ցուցակներում ընդգրկված քաղաքացիների 23,9%-ը:

Ընդհանուր առմամբ, առավել բարձր մասնակցություն դրսևորվում է նախագահական ընտրություններին:



Գծապատկեր 1. Նախագահական ընտրություններ

Ըստ գծապատկերի՝ ակնհայտ է, որ առավել ցածր մասնակցություն եղել է 1996 և 2013 թթ., համապատասխանաբար՝ 60.3 և 60.09%, իսկ առավել բարձր՝ 2008 թ.՝ 72.14%: Կարելի է ենթադրել, որ 1996 և 2013 թթ. նախագահական ընտրությունների ժամանակ հասարակությունը համակարգային փոփոխությունների էական հնարավորություններն առավել սահմանափակ է դիտարկել, քան 1991, 1998, 2003 և 2008 թթ. ընտրությունների ժամանակ: ՀՀ-ում նախագահական արտահերթ ընտրություններ են կազմակերպվել միայն 1998 թ.՝ նախագահի հրաժարականից հետո: Հետաքրքրական է, որ 2005 թ. ընդունված Սահմանադրությամբ, երբ նախագահը համարվում է պետության գլուխը⁶, սահմանվում է նաև նրա անձեռնմխելիությունը՝ լիազորությունների ընթացքում և դրանից հետո: ՀՀ նախագահը կարող է պատասխանատվության կանչվել միայն իր կարգավիճակի հետ չկապված գործողությունների համար, այն էլ լիազորությունները դադարեցնելուց հետո⁷: Բնականաբար, պատասխանատվության չենթարկվելու հանգամանքը սահմանափակում է հասարակության հնարավորությունները՝ վերահսկելու իր ընտրած նախագահի գործողությունները, և ընդհակառակը, լրացուցիչ հնարավորություն է տալիս նախագահին՝ ազատորեն ընդունելու որոշումներ, որոնք կարող են հակասել հասարակական շահին: Ըստ սահմանադրական փոփոխությունների՝ բարդացել է նաև ՀՀ նախագահին պաշտոնանկ անելու գործընթացը: Համաձայն 1995 թ. Սահմանադրության՝ ՀՀ նախագահի պաշտոնանկության որոշումը Սահմանադրական դատարանի եզրակացության հիման


⁵ Տե՛ս նույն տեղը, հոդված 113:

⁶ Տե՛ս նույն տեղը, հոդված 49:

⁷ Տե՛ս նույն տեղը, հոդված 56.1:

վրա ընդունում էր Ազգային ժողովը⁸, իսկ 2005 թ. Սահմանադրությամբ, Սահմանադրական դատարանի պաշտոնանկության հիմքերի բացակայության վերաբերյալ եզրակացության դեպքում, հարցը հանվում է Ազգային ժողովի քննարկումից⁹: ՀՀ նախագահին է նշանակում վարչապետ և վարչապետի առաջարկությամբ ձևավորում կառավարություն¹⁰: Գործադիր իշխանության պատասխանատվության շրջանակները քննարկված չեն ՀՀ սահմանադրությամբ: Այստեղ ամրագրված է միայն, որ պաշտոնատար անձինք պատասխանատվություն են կրում բնապահպանական տեղեկատվությունը թաքցնելու կամ դրա տրամադրումը մերժելու համար¹¹: ՀՀ նախագահի իրավասությունն է նաև նշանակել առաջին ատյանի դատարանների նախագահներին և դատավորներին, վերաքննիչ դատարանների նախագահներին և դատավորներին, Վճռաբեկ դատարանի նախագահին, նրա պալատների նախագահներին և դատավորներին¹²:

Ի տարբերություն նախագահական ընտրությունների, խորհրդարանական ընտրություններին մասնակցությունը կարելի է դիտարկել ըստ որոշակի միտումների. մինչև 2003 թ. (նվազման միտում) և 2003 թ. հետո (աճի միտում):



Գծապատկեր 2. Խորհրդարանական ընտրություններ

Խորհրդարանական ընտրություններին մասնակցության առավել ցածր տոկոս գրանցվել է 2003 թ., իսկ առավել բարձր՝ 2012 թ., ընդ որում՝ 2012 թ. արձանագրված մասնակցության տոկոսն առաջին անգամ գերազանցել է դրան անմիջապես նախորդած նախագահական ընտրություններին մասնակցության ցուցանիշը (3,8%-ով): Եթե այս միտումը պահպանվի հաջորդ խորհրդարանական և նախագահական ընտրություններում, կարելի է եզրակացնել, որ հասարակական հարաբերությունների կառավարման հասարակական ընտրությունը վերափոխվում է՝ նախագահականից անցում կատարելով խորհրդարանական համակարգի: Թե՛ 1995 և թե՛ 2005 թթ. Սահմանադրություններում օրենսդրական նախաձեռնության իրավունքը պատկանում է

⁸ Տե՛ս ՀՀ սահմանադրություն, 1995 թ., հոդված 57:

⁹ Տե՛ս նույն տեղը, հոդված 57:

¹⁰ Տե՛ս նույն տեղը, հոդված 55, կետ 4:

¹¹ Տե՛ս նույն տեղը, հոդված 33.2:

¹² Տե՛ս նույն տեղը, հոդված 55, կետ 11:

պատգամավորներին և Կառավարությանը¹³: Հասարակական կազմակերպությունների կամ Ազգային ժողովում մասնակցություն չունեցող կուսակցությունների նախաձեռնողական իրավունքը ՀՀ-ում բացակայում է: Սա կարող է խոչընդոտ լինել հրատապ հասարակական պահանջների բավարարմանը: ՀՀ-ում Ազգային ժողովի արտահերթ ընտրություններ չեն իրականացվել: Ընդ որում, Ազգային ժողովի պատգամավորներին նույնպես, ըստ 2005 թ. ընդունված Սահմանադրության, չի կարելի հետապնդել կամ պատասխանատվության ենթարկել նրանց լիազորությունների ժամկետում կամ դրանից հետո¹⁴:

Ցավոք, տեղական ինքնակառավարման համակարգի ընտրություններին մասնակցության վերաբերյալ տվյալները բավական սուղ են. հայտնի են միայն 2008 և 2012 թթ. ցուցանիշները, համապատասխանաբար՝ 56,4 և 46,3%: Այն դեպքում, երբ տեղական ինքնակառավարման համակարգը հասարակական հարաբերությունների կառավարման առավել առաջնային օղակներից մեկը պետք է լիներ, միջինը 51.35% մասնակցությունը լավատեսություն չի ներշնչում: Ընդ որում, տեղական ինքնակառավարումը Սահմանադրությամբ սահմանվում է որպես համայնքի իրավունք և կարողություն՝ սեփական պատասխանատվությամբ տեղական նշանակության հարցեր լուծելու¹⁵, սակայն 110-րդ հոդվածով համայնքների միացման և առանձնացման համար նշանակվող տեղական հանրաքվեների արդյունքները որոշիչ դեր չեն ունենում որոշման ընդունման համար¹⁶: Նշենք, որ «տեղական ինքնակառավարման մարմինները ժողովրդավարական ռեժիմի հիմնական հիմքերից մեկն են»¹⁷, և անցկացված հանրաքվեի արդյունքների անտեսումը կարող է էապես սահմանափակել ժողովրդավարության ձևավորման հնարավորությունները:

Քաղաքացիական հասարակության կառույցների միջոցով ՀՀ բնակչության մասնակցությունը հասարակական հարաբերությունների կառավարմանը կարող է էական ազդեցություն ունենալ պետական կառավարման անարդյունավետ որոշումների հակակշռման և հասարակության պահանջների բավարարմանն ուղղված քաղաքականության իրագործման տեսանկյունից: Քաղաքացիական հասարակության կառույցներից առանձնացրել ենք հասարակական կազմակերպություններն ու կուսակցությունները: Քաղաքացիական ինստիտուտների մասնակցությունը, ըստ Սահմանադրության, կատարվում է կամավոր հիմունքներով, սակայն չի նշվում հասարակական հարաբերությունների կառավարմանը դրանց մասնակցության մասին. «Յուրաքանչյուր ոք ունի այլ անձանց հետ միավորումներ կազմելու, այդ թվում՝ արհեստակցական միություններ կազմելու և դրանց անդամագրվելու իրավունք: Յուրաքանչյուր քաղաքացի ունի այլ քաղաքացիների հետ կուսակցություններ ստեղծելու և դրանց անդամագրվելու իրավունք»¹⁸: Այն, որ ՀՀ սահմանադրությունը չի սահմանում քաղաքացիական միավորումների անմիջական մասնակցությունը կամ վերահսկողությունը հասարակական նշանակություն ունեցող գործընթացների վրա, արդեն քաղաքացիական հասարակության զարգացման խոչընդոտ է: Պետք է նշել, որ քաղաքացիական վերահսկողու-

¹³ Տե՛ս նույն տեղը, հոդված 75:

¹⁴ Տե՛ս նույն տեղը, հոդված 66:

¹⁵ Տե՛ս նույն տեղը, հոդված 104:

¹⁶ Տե՛ս նույն տեղը, հոդված 110:


¹⁷ Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիա: Նախաբան:

¹⁸ ՀՀ սահմանադրություն, հոդված 28:

թյան ներքո գտնվում է միայն քաղաքական հարցերում զինված ուժերի չեզոքության պահպանումը¹⁹: Կուսակցությունները, որպես հասարակական միավորումներ, ունեն բացառիկ իրավունք թեկնածուներ առաջադրելու Ազգային ժողովի պատգամավորների, Հայաստանի Հանրապետության նախագահի, տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարների և ավագանու ընտրություններում²⁰:

Հասարակական կազմակերպությունները, ի տարբերություն կուսակցությունների, կարող են հասարակական պահանջումների պատվիրատուներ լինել, սակայն «Քաղաքացիական հասարակությունը երեք հատվածներից ամենաքիչ ազդեցիկն է, և գործարար հատվածն ու կառավարությունը ներդրումները քաղաքացիական հասարակությունում համարում են միջոցների և ժամանակի վատնում: Քաղաքացիական հասարակության դերը լուսանցքային է. այն ունի սահմանափակ ներգործություն, շահառուների փոքր բազա և հասարակության կողմից վստահության ցածր մակարդակ: Այս գործոնները սահմանափակում են հատվածի՝ կազմակերպված շահեր ներկայացնելու և հասարակական հզոր դերակատար դառնալու կարողությունը»²¹:

Հասարակական կազմակերպություններում ներգրավվածությունը բավական փոքր տոկոս է կազմում՝ ի տարբերություն կուսակցությունների:



Պատկեր 3. ՀՀ-ներում զբաղվածների թիվը, հազար մարդ²²

Հասարակական կազմակերպություններում նման փոքր տոկոս կազմող ներգրավվածության պայմաններում բավական դժվար կլինի հակակշռել պետական կառավարման համակարգի անարդյունավետ և հասարակական շահերին հակասող որոշումներին: Ի տարբերություն հասարակական կազմակերպությունների, 2012 թ. դրությամբ Հայաստանի կուսակցություններում ներգրավված է 999429²³ մարդ, այն դեպքում, երբ 18 կուսակցության տվյալներ ներկայացված չեն, իսկ «Բարգավաճ Հայաստան» կուսակցության տվյալները ներառված են 2007 թ. դրությամբ՝ 370000 մարդ (2012 թ. տվյալները հաշվարկված չեն): Նշենք նաև, որ 2՝ «Ազգային միասնության ուխտ» և «Ազգային

¹⁹ Տե՛ս նույն տեղը, հոդված 8.2:

²⁰ Տե՛ս Կուսակցությունների մասին ՀՀ օրենք, հոդված 21:


²¹ Հայաստանի քաղաքացիական հասարակությունը. անցումային փուլից դեպի համախմբում: Վերլուծական զեկույց: Եր., 2010, էջ 29: www.counterpart.am

²² Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2001-2013:

²³ Հաշվարկված է ըստ Քաղաքացիական և սոցիալական զարգացման հիմնադրամի <http://fcsd.am/> կայքում կուսակցությունների վերաբերյալ առկա տվյալների:

պետություն» կուսակցությունների ներկայացրած տվյալները չեն համապատասխանում «Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքի պահանջներին (անդամների նվազագույն թիվը, ըստ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ կետի, սահմանված է 2000, իսկ առաջին կուսակցության անդամների թիվը 67 է, երկրորդին՝ 873):

Թեև ՀՀ-ում գրանցված են բավական մեծ թվով կուսակցություններ (2004 թ.՝ 123, 2006 թ.՝ 90, 2008 թ.՝ 73, 2010 թ.՝ 74, 2012 թ.՝ 71), խորհրդարանական ընտրություններին դրանց մասնակցության ցուցանիշը բավական ցածր է. միջինը՝ 19%:



Գծապատկեր 4. *Խորհրդարանական ընտրություններին մասնակցող կուսակցությունների թիվը*

Փաստորեն, կարող ենք եզրակացնել, որ, չնայած կուսակցություններում անդամագրված անձանց մեծ քանակին (մշտական բնակչության 33,1%-ը), այնուամենայնիվ, խորհրդարանական ընտրություններին կուսակցությունների և հասարակական կազմակերպություններում բնակչության փոքր տոկոսով մասնակցության հետևանքով քաղաքացիական հասարակության միջոցով հասարակական հարաբերությունների կառավարման գործընթացին բնակչության մասնակցության աստիճանը հուսադրող չէ:

Ամփոփելով հասարակական հարաբերությունների կառավարման համակարգի նկարագրությունը՝ կարող ենք փաստել, որ հասարակական մասնակցությունը հասարակական հարաբերությունների կառավարմանը ակտիվ չէ ո՛չ ուղղակիորեն, ո՛չ էլ քաղաքացիական հասարակության կառույցների միջոցով: Եվ քանի որ հասարակությունը պատասխանատվության կանչելու մեխանիզմների ստեղծման պահանջ չի առաջադրում, դրանց ձևավորման խնդիրը ևս բացակայում է: Այս ամենի հետևանքով որոշակի անջրպետ է առաջանում հասարակության և կառավարող համակարգի միջև:

АСМИК АМБАРЦУМЯН

Ассистент кафедры „Антикризисного управления
и менеджмента туризма” АГЭУ

Управленческая система общественных отношений в РА.– В статье обсуждены компоненты управленческой системы общественных отношений и их взаимодействие в РА. Учитывая тот факт, что управляющий субъект общественных отношений является частью управляемого объекта, компоненты управленческой системы изучались с точки зрения участия населения в политических и социальных процессах, в контексте распределения полномочий и ответственности. В статье в основе становления демократии рассматривались как распределение властных полномочий, так и присутствие активного гражданского общества.

HASMIK HAMBARDZUMYAN

Assistant at the Chair of
„Anti-crisis and Tourism Management” at ASUE

The Management System of Social Relations in the RA.– In the article the components of the management system of social relations and their interaction in the RA are discussed. Taking into considering the fact that the management subject of public relations is a part of the managed object, the components of the management system have been studied in terms of people's participation in political and social processes in the context of distribution of powers and responsibilities. Distribution of powers as well as the presence of an active civil society were reviewed in the article on the basis of democracy.